Իրավունքների Պաշտպանություն
Առանց Սահմանների ՀԿ

Ժողովրդավարության
զարգացման
հիմնադրամ

2022-2023 թթ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ

Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Զեկույցի հեղինակներն են Հասմիկ Հարությունյանը և Դիանա Հարությունյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄ 4

1.1 Գրավոր քննություն 5

1.2 Գրավոր քննության ընթացքը. 5

1.3 Որակավորման գրավոր քննության արդյունքների գնահատումը և բողոքարկումը 9

2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ 11

2.1. Իրավակարգավորումներ 12

2.2. Հարցազրույցի փուլի դիտարկում 13

2.3. Խորհրդի կողմից հարցադրումներ՝ հարցազրույցի փուլ անցած հավակնորդների բարեվարքության վերաբերյալ 17

2.4. Բարձրագույն դատական խորհրդի կողմից հարցազրույցի գնահատում 18

3. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 20

4. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 22

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 22

5. ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ 26

ԱՄՓՈՓՈՒՄ 28

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 29

ՀԱՎԵԼՎԱԾ 1 29

ՆԱԽԱԲԱՆ

Սույն զեկույցն ամփոփում է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի կողմից դիտարկված դատավորների թեկնածուների հավակնորդների քրեական, քաղաքացիական և վարչական մասնագիտացման բաժինների համալրման նպատակով ընդհանուր ընթացակարգով անցկացված որակավորման ստուգումների մշտադիտարկման արդյունքները: Մասնավորապես, 2022 թվականի մայիսի 24-ին և 25-ին տեղի ունեցած քրեական և քաղաքացիական մասնագիտացման բաժինների որակավորման գրավոր ստուգումները, 2022 թվականի հոկտեմբերի 21-ին կայացած վարչական մասնագիտացման բաժնի որակավորման գրավոր ստուգումը, ինչպես նաև 2023 թվականի մարտի 15-ին տեղի ունեցած քաղաքացիական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգումը, ինչպես նաև նշված որակավորման ստուգումների հարցազրույցի փուլերը:

1. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՀՀ Դատական օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ որակավորման ստուգումը բաղկացած է հայտի ներկայացման, գրավոր քննության և հարցազրույցի փուլերից:[1]

Դատավորների հավակնորդների ցուցակում ընդգրկվել ցանկացող և Դատական օրենսգրքի 98-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող անձը, որակավորման ստուգմանը մասնակցելու, հավակնորդների ցուցակում ընդգրկվելու նպատակով Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևի հայտ:[2]

[1] Տե՛ս դատական օրենսգիրք հոդված 99:
[2] Տե՛ս դատական օրենսգիրք հոդված 98:

1.1 Գրավոր քննություն

Դատավորների թեկնածուների հավակնորդների համապատասխան մասնագիտացման բաժնի համար կազմվում է քննական շտեմարան, որը ներառում է 160 թեստային հարց: Գրավոր քննությանը հավակնորդները ստանում են թղթային ձևաչափով 10 տարբերակ՝ 80 հարցով,

- Քաղաքացիական մասնագիտացման թեստը բաղկացած է 80 հարցից՝ 50 նյութական և 30 դատավարական իրավունքի վերաբերյալ,
- քրեական մասնագիտացման թեստը բաղկացած է 80 հարցից՝ համապատասխանաբար նյութական և դատավարական իրավունքի վերաբերյալ 40/ 40 հարցերով,
- Վարչական մասնագիտացման թեստը բաղկացած է 80 հարցից՝ 50 նյութական և 30 դատավարական իրավունքի վերաբերյալ:[3]

1.2 Գրավոր քննության ընթացքը.

Քրեական, քաղաքացիական և վարչական մասնագիտացումների որակավորման ստուգման շրջանակներում Կազմակերպության կողմից դիտարկվել են.

- 2022 թվականի մայիսի 24-ին կայացած դատավորի թեկնածուների՝ **քրեական մասնագիտացման բաժինը** համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր քննությունը, որի ընթացքում 48 հավակնորդներից[4] հարցազրույցի փուլ են անցել 25 հավակնորդներ[5]:
- 2022 թվականի մայիսի 25-ին կայացած դատավորների թեկնածուների՝ **քաղաքացիական մասնագիտացման բաժինը** համալրելու նպատակով

[3] Տե՛ս https://court.am/hy/decisions-single/1246
https://court.am/hy/decisions-single/1489
[4] Տե՛ս https://court.am/hy/official-inner/297
[5] Տե՛ս https://court.am/hy/official-inner/306

անցկացված որակավորման գրավոր քննությունը, որով 47 հավակնորդներից[6] հարցազրույցի փուլ են անցել միայն 16-ը[7]:

- 2022 թվականի հոկտեմբերի 21-ին կայացած դատավորների թեկնածուների՝ **վարչական մասնագիտացման բաժինը** համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր քննությունը, որով գրավոր քննությանը մասնակցած 29 հավակնորդներից [8] հարցազրույցի փուլ են անցել 23 հավակնորդներ[9]:
- 2023 թվականի մարտի 15-ին կայացած դատավորի թեկնածուների՝ **քաղաքացիական մասնագիտացման բաժնի** համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննությունը, որով գրավոր քննությանը մասնակցած 20 հավակնորդներից[10] հարցազրույցի փուլ են անցել 14 հավակնորդներ[11]:

Դիտարկված բոլոր որակավորման ստուգումների գրավոր փուլերին մասնակցել են ընդհանուր 144 հավակնորդներ, որոնցից միայն 78-ն են անցել հարցազրույցի փուլ:

Հարցազրույցի փուլին մասնակցել են նաև Դատական օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող 26 հավակնորդներ, ինչպես նաև 1 իրավաբան գիտնական:

[6] Տե՛ս https://court.am/hy/official-inner/300
[7] Տե՛ս https://court.am/hy/official-inner/305
[8] Տե՛ս https://court.am/hy/official-inner/347
[9] Տե՛ս https:/23/court.am/hy/official-inner/350
[10]Տե՛ս https://court.am/hy/official-inner/391
[11]Տե՛ս https://court.am/hy/official-inner/408



Որակավորման ստուգումներից 2-ը անցկացվել են Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում, 2-ը՝ Երևանի պետական համալսարանում:

Մինչ քննասենյակ մուտք գործելը՝ հավակնորդները անցել են զննություն՝ հատուկ ստուգող սարքի միջոցով, որից հետո Դատական դեպարտամենտի աշխատակիցներին է հանձնվել Խորհրդի համապատասխան որոշմամբ սահմանված կարգում ներկայացված արգելված իրերի մասին տեղեկություն:[12]
Հավակնորդների կողմից վիճակահանությամբ՝ նախապես պատրաստված, թվակալված թղթերը ընտրելու միջոցով, որոշվել են նրանց քննական սեղանների համարները: Քննությունը սկսելուց առաջ՝ Դատական դեպարտամենտի ներկայացուցչի կողմից ներկայացվել են ընթացակարգային կանոնները, բացատրվել են հավակնորդների համար նախատեսված սահմանափակումները:[13] Դրանից հետո, համապատասխան պրոեկտորի միջոցով, նախքան քննության մեկնարկը,

[12] Տե՛ս որոշման օրինակը https://court.am/hy/decisions-single/1246
[13] Տե՛ս https://court.am/hy/decisions-single/1246

հավակնորդներին ցուցադրվել է վերջիններիս շտրիխ կոդերը, ինչպես նաև դրանց՝ պատահականության սկզբունքով ընտրվելու գործընթացը։

Քննական նմուշները քննական սենյակ բերվել են փակ տուփով, իսկ այն բերելու գործընթացը նկարահանվել է Դեպարտամենտի աշխատակազմի կողմից։ Դրանից հետո, հավակնորդներից մի քանիսը, պատահականության սկզբունքով բաժանել են քննական նմուշները, որոնք եղել են փակված ծրարներով։

Քննության տևողությունը սահմանվել է 6 ժամ։

Որակավորման ստուգումների ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ հավակնորդների կողմից բարձրաձայնվել են գրավոր առաջադրանքներում առկա տեխնիկական վրիպակներ։[14]

Հավակնորդներից մի քանիսը, չնայած դեպարտամենտի ներկայացուցիչների կողմից սահմանված կարգը ներկայացնելուն՝ ընտրված տարբերակի դիմաց համապատասխան X նշանը նշել էին վանդակից դուրս, մգեցված ձևով կամ այն լրացրել ջնջումով՝ մեկ դեպքով նշելով «+» և «-» նշանները։ Նմանատիպ դեպքերում նույնականացումից խուսափելու համար համապատասխան գրավոր աշխատանքի տվյալ էջը փոխվել է՝ անհրաժեշտության դեպքում կազմելով արձանագրություն։

Անդրադառնալով քննության տեխնիկական հատվածին՝ յուրաքանչյուր հավակնորդի տրամադրվել է ջուր և բաժակ։ Հավակնորդներին տրվել են նաև սևագրեր, որոնք ավելացվել են ըստ անհրաժեշտության։ Հավակնորդներին թույլատրվել է իրենց կողմից օգտագործված սևագրերը վերցնել իրենց հետ՝ ըստ ցանկության։ Քննության ավարտից հետո սեղանին դրված սևագրերը ոչնչացվել են հատուկ սարքի միջոցով։

Հավակնորդներին թույլատրվել է քննասենյակից դուրս գալ՝ բացառապես սանհանգույցից օգտվելու համար՝ ուղեկցողի հետ, որից առաջ հավակնորդների

[14] Օրինակ համապատասխան հարցում՝ «հայհոյեց ընկերոջը» բառակապակցության փոխարեն եղել է «Հայհոյեց կնոջը» բառակապակցությունը։ Մեկ այլ դեպքում եղել է ձևակերպում, որտեղ նշված է եղել Ա և Բ, որպես իրավիճակի բացատրում։ Սակայն ձևակերպմամբ շարադրված տառերը պետք է լինեին հակառակ հերթականությամբ, այն է՝ Բ-ն և Ա-ն։ Սակայն ըստ հավակնորդի խնդրի համատեքստից հասկացվել է և խնդիր չի առաջացել։

կողմից համապատասխան վկայականները և անձը հաստատող փաստաթղթերը հանձնվել են կարգադրիչներին։

Որոշ գրավոր քննություններին, մասնավորապես՝ 2022 թվականի մայիսի 24-ի և 25-ին կայացած որակավորման քննության ավարտից և քննասենյակից դուրս գալիս ևս հավակնորդները անցել են ստուգում՝ հատուկ սարքի միջոցով։

1.3 Որակավորման գրավոր քննության արդյունքների գնահատումը և բողոքարկումը

Դատավորների թեկնածուների ցուցակի քրեական, քաղաքացիական և վարչական մասնագիտացման բաժինների համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության աշխատանքների ստուգման և գնահատման հանձնաժողովի կազմում ներգրավված են եղել հինգ դատավոր անդամներ և երկու իրավաբան գիտնական անդամներ։[15]

Համաձայն դատական օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի՝ *«Որակավորման գրավոր քննությանը և հարցազրույցին, բացառությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկմանը, կարող են ներկա լինել և դրանց ընթացքին հետևել ... իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների մինչև երեք ներկայացուցիչ՝ ըստ դիմումների ներկայացման ժամանակագրական առաջնահերթության, յուրաքանչյուր հասարակական կազմակերպությունից՝ մեկ ներկայացուցիչ»։* Նշված իրավակարգավորումից բխում է, որ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության իրավունքը տարածվում է որակավորման գրավոր քննության ամբողջական գործընթացի վրա։ Օրենքով սահմանված բացառությունը վերաբերում է միայն հարցազրույցի փուլին, մասնավորապես՝

[15] Տե՛ս https://court.am/hy/decisions-single/1341
https://court.am/hy/decisions-single/1340
https://court.am/hy/decisions-single/1565
https://court.am/hy/decisions-single/1817
https://court.am/hy/decisions-single/1520

Բարձրագույն դատական խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկմանը։ Հետևաբար, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն իրավասու են մասնակցել և հետևել գրավոր քննության ողջ ընթացքին, ներառյալ դրա գնահատման փուլը, մինչդեռ հարցազրույցի պարագայում մասնակցության իրավունքը սահմանափակված է։

Գրավոր քննության ողջ ընթացքին հետևելու սահմանափակումը կարող է նվազեցնել գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը։

Գրավոր քննությունների արդյունքների հրապարակումից հետո 144 հավակնորդներից 55-ը բողոքարկել են գրավոր քննության արդյունքները, ինչի արդյունքում 45 հավակնորդների միավորներում տեղի են ունեցել փոփոխություններ։

Օրինակ՝ հավակնորդի կողմից հարցի վերաբերյալ ներկայացված փաստարկները հիմնավոր չեն եղել, քանի որ հարցի ձևակերպումը (կարող է) թույլ է տվել ենթադրել, որ որոշակի դեպքերում վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունը կարող է հանգեցնել կողմերի մրցակցութան սկզբունքի խախտման, ուստի տվյալ հարցի վերաբերյալ գնահատականի փոփոխություն չի կատարվել։

Մեկ այլ դեպքով՝ հարցի վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում քրեական օրենսդրության դրույթների ճիշտ մեկնաբանությունից, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի վերաբերելի նախադեպային որոշումներից, ուստի գնահատականի փոփոխություն տվյալ հարցի վերաբերյալ չի կատարվել։

Մյուս դեպքով՝ հավակնորդի հիմնավորումները կրկնել են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտած դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ է տվել գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի տրվել է 1 միավոր։

Մեկ այլ դեպքով՝ հարցի վերաբերյալ հավակնորդի կողմից ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները խնդրի ձևակերպման մեջ տեղ գտած

անճշտության պարագայում ընդունելի են համարվել հանձնաժողովի համար, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի տրվել է 1 միավոր։[16]

Բողոքարկման փուլը անցնելուց հետո Բարձրագույն դատական խորհրդի կողմից, հրապարակվել է հարցազրույցի փուլ անցած հավակնորդների միասնական համալրման ցուցակը, որից հետո հրապարակվել է հարցազրույցի ժամանակի և վայրի մասին տեղեկատվություն։

2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ

2022 թվականի դեկտեմբերի 23-ին Դատական օրենսգրքում կատարված օրենսդրական փոփոխություններով հոգեբանական թեստավորման փուլը կարգավորող նորմերը ուժը կորցրած են ճանաչվել։ Հոգեբանական թեստավորման փուլն անցել են 2022 թվականի մայիսի 24-ին և 25-ին կայացած դատավորների թեկնածուների ցուցակի քրեական և քաղաքացիական մասնագիտացման բաժինների համալրման նպատակով անցկացված որակավորման ստուգմանը մասնակցած հավակնորդները, որը տեղի է ունեցել 2022 թվականի սեպտեմբերի 22-ին և 23-ին Արդարադատության ակադեմիայում։[17]

Հոգեբանական թեստավորման ընթացքում հավակնորդը նախքան հոգեբանական թեստերի հարցերին պատասխանելը՝ ծրագրի համապատասխան բաժնում լրացնում է իր անունը, ազգանունը, հայրանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ինչից հետո ծրագրի միջոցով պատասխանում է հոգեբանական թեստերի հարցերին՝ համապատասխան թեստային հարցի ցուցումների համաձայն։[18]

---

[16] Բողոքարկման ամբողջական արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տես ստորև։
https://court.am/hy/official-inner/303
https://court.am/hy/official-inner/304
https://court.am/hy/official-inner/349
https://court.am/hy/official-inner/411

[17] Տե՛ս https://court.am/hy/official-inner/330

[18] Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=145751

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼ

2.1. Իրավակարգավորումներ

Հարցազրույցի հարցերի ընտրությունը կատարվում է վիճակահանությամբ՝ հավակնորդի կողմից ընտրելու միջոցով, պատրաստվելու համար տրամադրվում է 30 րոպե ժամանակ: Յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցի առավելագույն տևողությունը մեկ ու կես ժամ է:

Դիտարկված հարցազրույցի փուլերի ժամանակահատվածում գործել են տարբեր կարգավորումներ: 2022թ. դեկտեմբերի 23-ին Դատական օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների հիման վրա՝ փոփոխություններ նախատեսվեցին նաև դատավորների հավակնորդների հարցազրույցի փուլը կարգավորող դրույթներում: Մինչև վերոգրյալ օրենսդրական փոփոխությունները գործող իրավակարգավորումներով հարցազրույցը կազմված էր երկու մասից՝

- յուրաքանչյուր հավակնորդի անձնական գործի, ներառյալ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած խորհրդատվական եզրակացության և անցած մասնագիտական փորձի ուսումնասիրություն,
- դատավորի վարքագծի կանոններին վերաբերող հիպոթետիկ խնդրի վերաբերյալ հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն և դիրքորոշման ներկայացում՝ դատավորի վարքագծի հիմնարար կանոնների, դատավորին ներկայացվող պահանջների և որպես դատավոր գործելու համար կարևոր այլ անձնական հատկանիշները գնահատելու համար:[19]

Դատական օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում[20]՝ հարցազրույցի փուլը բաղկացած է երեք մասից՝ գործող երկու փուլերին ավելանալով նոր փուլ՝ համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի, այդ թվում՝ հիպոթետիկ իրավական նորմ, դատական ակտում արտահայտված դիրքորոշում,

[19] Տե՛ս Դատական օրենսգիրք, հոդված 108

[20] Օրենսդրական փոփոխությունը տե՛ս ԱԺ,23.12.2022,ՀՕ-575-Ն

տեսության մեջ արտահայտված իրավական կարծիքներ և այլն) հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ հմտություններն ու որակները գնահատելու համար:[21]

2.2. Հարցազրույցի փուլի դիտարկում

Քրեական, քաղաքացիական և վարչական մասնագիտացումների որակավորման ստուգման շրջանակներում Կազմակերպության կողմից դիտարկվել են.

– 2022 թվականի սեպտեմբերի 26-ին, 27-ին և 29-ին կայացած քրեական և քաղաքացիական մասնագիտացման բաժինները համալրելու նպատակով անցկացված որակավորման հարցազրույցի փուլերը, որին քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված հարցազրույցի փուլին մասնակցել է 25 հավակնորդ, իսկ քաղաքացիական մասնագիտացման բաժնի հարցազրույցի փուլին՝ 17 հավակնորդ, որոնցից մեկը 1 իրավաբան գիտնական էր:[22]

– 2023 թվականի հունվարի 26-ին կայացած վարչական մասնագիտացման բաժնի համալրելու նպատակով անցկացված որակավորման հարցազրույցի փուլը, որին մասնակցել է 24 հավակնորդ, որոնցից մեկը՝ իրավաբան գիտնական:[23]

– 2023 թվականի մայիսի 30-ին և 31-ին կայացած քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված որակավորման

[21] Սույն զեկույցի շրջանակներում հարցազրույցի փուլերը անցկացվել են և՛ երկու փուլով և՛ երեք՝ ըստ որակավորման քննության ժամանակահատվածում գործող օրենսդրության:
Իրավական խնդրի և վարքագծի խնդիրների վերաբերյալ օրինակները տես հավելված 2-ում:
[22] Տե՛ս https://court.am/hy/official-inner/305
[23] Տե՛ս https://court.am/hy/official-inner/350

հարցազրույցի փուլը, որին մասնակցել է 37 հավակնորդ[24], որոնցից 14-ը գրավոր քննությունը հաղթահարած հավակնորդները և Դատական օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով հայտ ներկայացրած թվով 23 անձինք:[25]

2022 թվականի սեպտեմբերի 26-ին, 27-ին և 29-ին կայացած դատավորների թեկնածուների ցուցակի քրեական և քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված հարցազրույցը բաղկացած է եղել երկու մասից՝ յուրաքանչյուր հավակնորդի անձնական գործի, ներառյալ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած խորհրդատվական եզրակացության և անցած մասնագիտական փորձի ուսումնասիրություն և դատավորի վարքագծի կանոններին վերաբերող հիպոթետիկ խնդրի վերլուծություն:

2023 թվականի հունվարի 26-ին և մարտի 15-ին կայացած վարչական և քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված հարցազրույցը կազմված է եղել երեք մասից՝ ներառելով համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարց:

Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը գործող կարգավորումներով[26] 2022 թվականի սեպտեմբերի 26-ին, 27-ին և 29-ին կայացած հարցազրույցի փուլի ընթացքում Խորհրդի կողմից հավակնորդներին հարցեր էին ուղղվում մասնագիտական աշխատանքի

---

[24] Տե՛ս https://court.am/hy/official-inner/408

[25] Տե՛ս https://court.am/hy/official-inner/408

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար Բարձրագույն դատական խորհուրդ հայտ ներկայացրած, վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող անձ:

[26] 2022թ. դեկտեմբերի 23-ին Դատական օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների հիման վրա՝ փոփոխություններ նախատեսվեցին նաև դատավորների հավակնորդների հարցազրույցի փուլը կարգավորող դրույթներում: Դատական օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում26՝ հարցազրույցի փուլը բաղկացած է երեք մասից՝ գործող երկու փուլերին ավելանալով նոր փուլ՝ համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի, այդ թվում՝ հիպոթետիկ իրավական նորմ, դատական ակտում արտահայտված դիրքորոշում, տեսության մեջ արտահայտված իրավական կարծիքներ և այլն) հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ հմտություններն ու որակները գնահատելու համար:

փորձառության, դատավոր դառնալու շարժառիթի ու ակնկալիքի, նրա անձնական հատկանիշների, նախասիրությունների վերաբերյալ և դրա առնչությամբ իրականացվում էր հարցուպատասխան, որին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էր հոգեբան, և հավակնորդներին տրվել են նաև հոգեբանական բնույթի հարցեր։[27]

Կազմակերպության կողմից հարցում է կատարվել Դատական դեպարտամենտ, պարզելու համար՝ արդյո՞ք 2022 թվականի սեպտեմբերի 26-ին, 27-ին և 29-ին, ինչպես նաև 2023 թվականի հունվարի 26-ին, մայիսի 30-ին և 31-ին անցկացված որակավորման ստուգման հարցազրույցների փուլերին մասնակցել է հոգեբան։ Ի պատասխան գրությանը տեղեկացվել է, որ 2022 թվականի սեպտեմբերի 26-ին, 27-ին և 29-ին անցկացված հարցազրույցների փուլերին մասնակցել են հոգեբաններ՝ Արթուր Կոբելյանը և Գագիկ Պետրոսյանը։ Անդրադառնալով 2023 թվականի հունվարի 26-ին, մայիսի 30-ին և 31-ին անցկացված հարցազրույցներին, օրենսդրական փոփոխության արդյունքում հարցազրույցին հոգեբանի մասնակցության իմպերատիվ պահանջ այլևս նախատեսված չէ, և յուրաքանչյուր դեպքում հոգեբանի ներգրավման անհրաժեշտությունը որոշվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից։

Օրենսդրական փոփոխությունների հիման վրա հոգեբանական թեստավորման փուլն առհասարակ հանվել է որակավորման ստուգման գործընթացից։ Հոգեբանական թեստավորման նպատակը հավակնորդի էմոցիոնալ ինտելեկտը, բարոյական դատողությունը, արժեքային համակարգը գնահատելն է։[28] Սահմանադրական դատարանը դեռևս 2017 թվականի հունիսի 20-ի ՍԴՈ-1374 որոշմամբ անդրադարձել է այս հարցին՝ նշելով, որ հոգեբանական թեստը կարևոր գործիք է դատավորի թեկնածուի ոչ մասնագիտական, սակայն աշխատանքի համար էական անձնային հատկանիշները գնահատելու համար։ Դատարանը նշել է, որ առանց այդ թեստի արդյունքների

[27] ՝ Հնչեցված հարցերի ցանկը տե՛ս հավելված 1-ում։

[28] « Հայաստանի հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 23.12.2022 թվականին ընդունված և 07.01.2023 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-575-Ն սահմանադրական օրենքի 21-րդ հոդված

Արդարադատության խորհուրդը չի կարող լիարժեք իրականացնել դատավորների թեկնածուների ցուցակ կազմելու սահմանադրական գործառույթը։[29]

2023 թվականի հունվարի 26-ին կայացած վարչական մասնագիտացման հարցազրույցին՝ հարցազրույցի փուլին մասնակցած հավակնորդների վրա տարածվել է 2022 թվականի դեկտեմբերի 22-ին կատարված փոփոխությունները, որով հավակնորդները բացի վարքագծի կանոնի վերաբերյալ հիպոթետիկ խնդրից՝ պետք է պատասխանեն նաև իրավական խնդրի։ Սրանով պայմանավորված՝ հավակնորդների մի մասը, ի պատասխան Խորհրդի հարցի, կարծում էր, որ նշված օրենսդրական կարգավորումը չպետք է տարածվեր վերջիններիս վրա՝ հայտ ներկայացնելու պահին վերոնշյալ օրենսդրական փոփոխության բացակայությամբ պայմանավորված, հավակնորդների մյուս մասը, այնուամենայնիվ, որևէ խնդիր չի տեսել հարցազրույցի փուլի ընթացքում իրավական խնդրին պատասխանելու առնչությամբ։[30]

[29] Տե՛ս https://www.concourt.am/decision/decisions/sdv-1374.pdf

[30] Թեկնածուների մեծամասնությունը նշված փոփոխությունը չեն դիտարկում որպես իրավիճակի վատթարացում, այլ նշում, որ դատավորի պաշտոնը այն պաշտոնն է, որ պետք է ընտրությունը անցկացվի բարդ կերպով։ Թեկնածուների կողմից նաև հնչել են կարծիքներ, որ իրավական գիտելիքները ստուգելը պարտադիր պայման է, Խորհուրդը կաշկանդված չէ հարցեր տալուց նաև մինչ այս փոփոխության ժամանակահանտվածի կարգավորումներով։ Թեկնածուներից մեկը նշել է, որ այդ հարցերին թեստով պատասխանել է, ԲԴԽ-ն ցանկացած բնույթով հնարավորություն պետք է ունենա հարցեր տալ։ Իսկ թեկնածուներից մեկը նշել է, որ իր համար ոչինչ չի փոխվել, քանի որ թեկնածուն իրավաբան գիտնական է։

Թեկնածուներից մեկը հայտնել է իր անհամաձայնությունը նշված փոփոխության վերաբերյալ, մասնավորապես ըստ թեկնածուի օրենսդրական մասով սահմանվել է կարգ։ Թեկնածուն՝ հայտ ստորագերելով համաձայնվել է այդ ընթացակարգին, որից հետո այն փոխվել է՝ առանց թեկնածուների թույլտվության։

Թեկնածուներից մեկը խուսափել է այդ հարցին պատասխանելուց, այն հիմնավորմամբ, որ եթե վերջինս ընտրվի դատավորի պաշտոնում, միգուցե հետագայում այդ հարցի վերաբերյալ վեճ լինի։ Պատասխանելով հարցին՝ կստեղծվի բացարկի հիմք, քանի որ դատավորի վարքագծի կանոնները տարածվում են նաև դատավորի թեկնածուների վրա։

2.3. Խորհրդի կողմից հարցադրումներ՝ հարցազրույցի փուլ անցած հավակնորդների բարեվարքության վերաբերյալ

Բարձրագույն դատական խորհրդի կողմից քրեական, քաղաքացիական և վարչական մասնագիտացման բաժինների որակավորման ստուգման հարցազրույցի փուլ անցած 105 հավակնորդներից 11-ին տրվել են հարցեր վերջիններիս բարեվարքության վերաբերյալ։

Մասնավորապես, հարցերը ներառել են՝

Հավակնորդների գույքի, ֆինանսական միջոցների և նվիրատվությունների վերաբերյալ հարցեր.

- հավակնորդների ընտանիքի անդամի անշարժ և շարժական գույքերի, դրամական միջոցների վերաբերյալ,
- հավակնորդների գույքի ծագման աղբյուրին վերաբերող հարցեր,
- հավակնորդի հարկային հաշիվների և ձեռք բերած գույքի անհամապատասխանության, ինչպես նաև ժառանգության վերաբերյալ,
- հավակնորդի՝ 30 հազար ԱՄՆ դոլարով արժողությամբ բաժնետոմսերի, ինչպես նաև 35 մլն դրամով 1500 բաժնետոմսերի ձեռքբերմանը,
- հավակնորդի՝ 60 մլն դրամի չափով ստացված նվիրատվությանը, ինչպես նաև եկամուտներին և ծախսերին, քանի որ դրանք չեն համապատասխանել իրար։
- հավակնորդի՝ ՍՊԸ տնօրեն լինելուն և բաժնեմասերի վերաբերյալ։

Հավակնորդների բարեվարքության թերթիկում վրիպակների և որոշ այլ հարցերի վերաբերյալ.

- Բարեվարքության թերթիկում ամբողջական տվյալներ չներկայացնելու՝ նախկին աշխատավայրի մասին նշված չլինելու պատճառների վերաբերյալ, օրինակ՝ դատավորի օգնական աշխատելը ներկայացված չլինելը,

- ԿԿՀ-ի կողմից բացասական բարեվարքություն տրամադրված լինելու վերաբերյալ պարզաբանումներին։ Այդուհանդերձ թեկնածուն նշել է, որ դիմում է ներկայացրել, և դրանով իսկ արդեն պատասխանել է հարցերին,
- նախկինում դատավորների թեկնածուների ցուցակից հանված լինելու վերաբերյալ, ինչը վերաբերել է բարեվարքությանը,
- հավակնորդի հայտարարագրում տեխնիկական վրիպակների վերաբերյալ։

Այլ հարցեր

- հավակնորդներից մեկը նախկինում հանդիսացել է կուսակցության անդամ /Հայ Ազգային Կոնգրես /ՀԱԿ/, սակայն վերջինս ներկայացրել է, որ իր անդամակցությունը դադարեցված է, և 2021թ կայացած ընտրություններին չի մասնակցել,
- հավակնորդի վարչական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ, մասնավորապես ունեցել է 20-ից ավելի ակտեր, որոնցից 8-ը ըստ կապված է եղել աշխատանքային գործունեության հետ։

2.4. Բարձրագույն դատական խորհրդի կողմից հարցազրույցի գնահատում

Համաձայն դատական օրենսգրքի 108-րդ հոդվածի՝ հարցազրույցի ժամանակ Բարձրագույն դատական խորհրդի անդամներին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են համապատասխան հոդվածով և Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ սահմանված գնահատման ենթակա հատկանիշները։ Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ գնահատում է յուրաքանչյուր հավակնորդին՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ։

Բոլոր հավակնորդների հարցազրույցների ավարտից հետո Բարձրագույն դատական խորհրդի անդամներն իրականացնում են հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկում, որին հաջորդում է քվեարկությունը։

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը։

Այսպիսիով՝ 2022 թվականի սեպտեմբերի 26-ին, 27-ին և 29-ին, 2023 թվականի հունվարի 26-ին, մայիսի 30-ին և 31-ին կայացած քրեական, քաղաքացիական և վարչական մասնագիտացման որակավորման ստուգման հարցազրույցի փուլերին մասնակցած 104 հավակնորդներից այն հաղթահարել են միայն 56-ը։

Գծապատկեր 2
Որակավորման ստուգումների հարցազրույցի փուլերին մասնակցած և այն հաղթահարած հավակնորդներ



Ըստ մասնագիտացումների՝ 2022 թվականի սեպտեմբերի 26-ին և 27-ին կայացած քրեական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգումների հարցազրույցի փուլին մասնակցած 25 հավակնորդներից այն հաղթահարել են 14 հավակնորդներ։

2022 թվականի սեպտեմբերի 29-ին կայացած քաղաքացիական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգման հարցազրույցի փուլին մասնակած 17 հավակնորդներից հարցազրույցի փուլը հաղթահարել են 9 հավակնորդներ, իսկ 2023 թվականի մայիսի 30-ին և 31-ին կայացած քաղաքացիական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգման հարցազրույցի փուլին մասնակցած 34 հավակնորդից այն հաղթահարել է 19 հավակնորդ։

2023 թվականի հունվարի 26-ին կայացած վարչական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգման հարցազրույցի փուլին մասնացած 24 հավակնորդներից այն հաղթահարել են 14 հավակնորդներ։

3. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունը հարցում է ներկայացրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որով խնդրել է տրամադրել տեղեկություն, թե *յուրաքանչյուր որակավորման ստուգման արդյունքում հարցազրույցի փուլն անցած թեկնածուներից քանի՞սի վերաբերյալ է Հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունը եղել «դրական», «դրական վերապահումով», և քանիսի՞նը «բացասական»՝ ըստ մասնագիտացման՝ առանց անձնական տվյալների ներկայացման։* Ի պատասխան հարցմանը՝ ԿԿՀ-ն տրամադրել է ըստ մասնագիտացումների տեղեկություն[31] ՝ առանց անձնական տվյալների ներկայացման։ Համաձայն ներկայացված տեղեկության՝

Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 26-ին և 27-ին անցկացված քրեական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգման հարցազրույցի փուլը հաղթահարած 14 թեկնածուներից 11-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, 1-ի վերաբերյալ՝ դրական՝ վերապահումով, 2-ի վերաբերյալ՝բացասական եզրակացություն։

[31] Տե՛ս պատասխան գրություններ՝ 01/1355/2023, 01/1083-2024, 01/1084-2024

Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 29-ին անցկացված քաղաքացիական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգման հարցազրույցի փուլը հաղթահարած 9 թեկնածուներից 8-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, 1-ի վերաբերյալ՝ դրական՝ վերապահումով եզրակացություն։

Վարչական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով 2023 թվականի հունվարի 26-ին անցկացված և հարցազրույցի փուլը հաղթահարած 14 թեկնածուներից 9-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, 4-ի վերաբերյալ՝ դրական՝ վերապահումով եզրակացություն, իսկ 1-ի վերաբերյալ՝բացասական եզրակացություն։

Քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով 2023 թվականի մայիսի 30-ին և 31-ին անցկացված և հարցազրույցի փուլը հաղթահարած 19 թեկնածուներից 16-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, թվով 3-ի վերաբերյալ՝դրական վերապահումով։

Դրական վերապահումով եզրակացությունների համար մեծամասամբ հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության վերաբերյալ անհամապատասխանությունները։ Բացի դա եղել են դեպքեր, երբ եզրակացության համար հիմք է են հանդիսացել թեկնածուի վարչական պատասխանատվությունը, թեկնածուի բարեվարքությունը՝ վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը։

Բացասական եզրակացությունների համար մեծամասամբ հիմք են հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, թեկնածուի կարգապահական և վարչական պատասխանատվությունները, ինչպես նաև հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատությունը։



4. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմակերպության կողմից ուսումնասիրվել են նաև հարցազրույցի փուլը հաղթահարած դատավորի թեկնածուների՝ ինչպես դատավորի պաշտոնում արդեն նշանակված, այնպես էլ դեռևս չնշանակված թեկնածուների աշխատավայրերը՝ ըստ կառույցների:

Գծապատկեր 4
Հարցազրույցի փուլը հաղթահարած դատավորների թեկնածուների պաշտոնները մինչ որակավորման ստուգումներին մասնակցելը



Թեկնածուներից 25-ը հանդիսացել են դատական իշխանության ներկայացուցիչներ, մասնավորապես՝

- Թեկնածուներից 1-ը զբաղեցրել է Սահմանադրական դատարանի դատավորի օգնականի,
- 1-ը՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի օգնականի,
- 17-ը՝ տարբեր դատարաններում՝ այդ թվում՝ Վճռաբեկ դատարանում (Վճռաբեկ դատարանի Վարչական և հակակոռուպցիոն պալատում), Վերաքննիչ դատարանում (քաղաքացիական, քրեական, վարչական), առաջին ատյանի, ինչպես նաև մասնագիտացված դատարաններում՝ այդ թվում՝ Մնանկության և վարչական դատարաններում՝ զբաղեցնելով դատավորի օգնականի պաշտոնը։

Հատկանշական է, որ դատական համակարգում նշանակվող դատավորների զգալի մասը նախկինում աշխատել է որպես դատավորի օգնական, ինչը վկայում է օգնականների ինստիտուտի զարգացման մասին։ Մյուս կողմից, եթե դատական համակարգում դատավորի պաշտոնում նշանակվող անձանց մեծ մասը նախկինում իրականացրել է դատավորի օգնականի գործառույթներ, ապա նման միտումը, դրական կողմերից զատ, կարող է պարունակել որոշակի ռիսկեր ևս՝ պայմանավորված

դատավորների հետ ունեցած հարաբերություններով։Անդրադառնալով դատական իշխանությունում այլ պաշտոններ զբաղեցրած թեկնածուներին՝

- Թեկնածուներից 4-ը աշխատել են Դատական դեպարտամենտում, համապատասխանաբար՝
  - որպես իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչության՝ ԲԴԽ նիստերի նախապատրաստման և որոշումների նախագծերի մշակման բաժնի պետ,
  - դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության՝ դատական պրակտիկայի վարչության բաժնում՝ գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,
  - նույն վարչության դատական պրակտիկայի վերլուծության բաժնում՝ գլխավոր մասնագետի պաշտոնակատար,
  - Դատական պրակտիկայի վերլուծության բաժնի պետի պաշտոնակատար։
- Թեկնածուներից 1-ը աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության պետ։
- Թեկնածուներից 2-ը աշխատել են Վճռաբեկ դատարանում՝ որպես Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար։
- Թեկնածուներից 1-ը աշխատել է ՀՀ Սնանկության դատարանում՝ որպես աշխատակազմի ղեկավար։

Թեկնածուներից 9-ը զբաղեցրել են պաշտոններ իրավապահ համակարգում, մասնավորապես՝

- 1-ը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում՝ որպես առաջատար իրավախորհրդատու,
- 1-ը՝ Ոստիկանության պարեկային ծառայության մոնիթորինգի և վերլուծության բաժնի պետի,

- 5-ը՝ դատախազությունում՝ որպես դատախազի, ավագ դատախազի պաշտոններ,
- 1-ը՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի իրավական ապահովման վարչության պետի,
- 1-ը՝ ՀՀ քննչական կոմիտեի՝ ՀԿԳ քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի պաշտոնը։

Թեկնածուներից 7-ը զբաղեցրել են պաշտոններ այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, մասնավորապես՝

- 1-ը՝ ՀՀ Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետի տեղակալի,
- 1-ը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատարի,
- 1-ը՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչության գլխավոր վերահսկողի,
- 1-ը՝ Օրենսդրական զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն հիմնադրամի ավագ իրավաբան փորձագետի, թիմի ղեկավարի,
- 1-ը՝ ՀՀ Արդարադատության նախարարության վերահսկողության վարչության առաջին բաժնի պետի,
- 1-ը՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ իրավախորհրդատուի,
- 1-ը՝ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի։

Թեկնածուներից 10-ը հանդիսացել են մասնավոր ոլորտի ներկայացուցիչներ, մասնավորապես՝

- 1-ը՝ սնանկության գործերով կառավարիչ,

- 5-ը՝ իրավաբանի պաշտոնում՝ աշխատելով հետևյալ կազմակերպություններում՝
  - «Ակբա բանկ» ԲԲԸ,
  - «Ինգո Արմենիա» ՓԲԸ,
  - Փայտե ՍՊԸ,
  - «Ֆինքա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի իրավաբանական վարչության դատական իրավաբանների բաժին,
  - Կոտայք գարեջրի գործարան ՍՊԸ,
- 1-ը՝ Լեգիթիմ ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն,
- 1-ը՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի իրավաբանական վարչության՝ դատական և սնանկության վարույթների բաժնի ղեկավար,
- 1-ը՝ ՋԻԷՆ ՍՊԸ-ում՝ իրավաբանական բաժնի ղեկավար,
- 1-ը՝ «Ֆասթ Շիֆթ» ՍՊԸ-ում՝ իրավաբանական ծառայության ղեկավար։

Թեկնածուներից 4-ը հանդիսացել են Փաստաբանական պալատի և Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներ, մասնավորապես՝

- 2-ը՝ փաստաբանի,
- 1-ը՝ հանրային պաշտպանի,
- 1-ը՝ Փաստաբանական պալատում, որպես իրավական հարցերով փորձագետ։[32]

5. ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Խորհրդի կողմից դատավորների թեկնածուների համապատասխան ցուցակներում ընդգրկված 56 թեկնածուներից 49 անցել են ուսումնառություն Արդարադատության ակադեմիայում։[33] Դատավորի թեկնածուների ցուցակներում ընդգրկված 56

[32] Թեկնածուների պաշտոնների վերաբերյալ մանրամասները տե՛ս https://court.am/hy/official-inner/408
https://court.am/storage/uploads/files/service-page/TB1KMhXbuwPZRKKYIkQWq3SdPDRWinlGYaCW2MnQ.pdf
Տե՛ս https://court.am/storage/uploads/files/service-page/Atb5LFgdVPeGqHw49NXFwgGcN5HGGGzXhZyMTLz1.pdf
https://court.am/storage/uploads/files/service-page/NzGwDpRkfLfumTYaqiBd1ynArpfAomFXIf24p3b8.pdf
[33] Տե՛ս https://aoj.am/about/graduates

թեկնածուներից 19-ը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նշանակվել են դատավորի պաշտոնի: Ընդհանուր ընթացակարգով որակավորման ստուգումներին մասնակցած և այն հաղթահարած բոլոր նշանակված թեկնածուները անցել են Արդարադատության ակադեմիայում ուսումնառություն:[34]

Մասնավորապես՝քաղաքացիական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգմանը մասնակցած և հարցազրույցի փուլը հաղթահարած 28 թեկնածուներից դատավորի պաշտոնում են նշանակվել 11 թեկնածուներ, ընդ որում հավակնորդներից մեկը մասնակցել է նաև հատուկ կարգով անցկացված որակավորման ստուգմանը և նշանակվել դատավորի պաշտոնում՝ առանց Արդարադատության ակադեմիայում ուսումնառոության:

Քրեական մասնագիտացման բաժնի որակավորման ստուգմանը մասնակցած և հարցազրույցի փուլը հաղթահարած 14 թեկնածուներից դատավորի պաշտոնում նշանակվել է միայն 7 թեկնածու:

Վարչական մասնագիտացման բաժնի հավակնորդների ցուցակում ներառված 14 թեկնածուներից դատավորի պաշտոնում նշանակվել են 1 թեկնածու, իսկ թեկնածուներից 4-ը դատավորի պաշտոնում նշանակվել են հատուկ կարգով որակավորման ստուգումանը մասնակցելու և այն հաղթահարելու արդյունքում՝ առանց Արդարադատության ակադեմիայում ուսումնառության կուրսն անցնելու:

Թեկնածուներից 37-ը, չնայած հաղթահարել են հարցազրույցի փուլը, սակայն 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն նշանակվել դատավորի պաշտոնում: Անդրադառնալով 2025 թվականին դատավորների թեկնածուների նշանակմանը՝ թեկնածուներից 8-ը նշանակվել են 2025 թվականին:

Հատկանշական է, որ թեկնածուներից 5-ը, չնայած չեն նշանակվել նշված որակավորման ստուգումների ընթացքում, այնուամենայնիվ, դիմելով հատուկ կարգով

[34] Դատավորների թեկնածությունների հավակնորդների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց ուսումնառության ժամկետի տևողությունն առնվազն յոթ ամիս է, բայց ոչ ավելի, քան 10 ամիս:

կազմակերպված որակավորման ստուգմանը, հաղթահարել են այն և այժմ զբաղեցնում են դատավորի պաշտոնը: Սա նշանակում է, որ թեկնածուները, հաղթահարելով ընդհանուր կարգով կազմակերպված որակավորման ստուգումները, դեռևս չնշանակվելով դատավորի պաշտոնում և չսովորելով Արդարադատության ակադեմիայում, դիմել են պարզեցված ընթացակարգով կազմակերպված որակավորման ստուգմանը: Հաղթահարելով հատուկ կարգի որակավորման ստուգումը՝ թեկնածուները համալրել են դատական իշխանությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված բարեվարքության վերաբերյալ եզրակացությունները հրապարակային չեն և կրում են խորհրդատվական բնույթ:
- Որակավորման ստուգման գործընթացից հոգեբանական թեստավորման փուլը հանվել է: Մինչդեռ, հոգեբանները կարող են գնահատել դատավորի պաշտոնի հավակնող անձանց էմոցիոնալ ինտելեկտը, բարոյական դատողությունը և արժեքային համակարգը, ինչը մասնագիտական մեթոդաբանություն և գիտելիքներ է պահանջում: Այդ գնահատումը պետք է իրականացվի բացառապես հոգեբան մասնագետների կողմից:
- Բարձրագույն դատական խորհուրդը չունի դատավորների հավակնորդների ընտրության վերաբերյալ որոշումների պատճառաբանման պարտավորություն:
- ՀԿ-ների մասնակցությունը սահմանափակված է որակավորման գրավոր քննության գնահատման գործընթացում:
- Գործող օրենսդրական կարգավորումներով ՀԿ-ների մասնակցությունը որակավորման քննություններին սահմանափակ է, մասնավորապես, չի տարածվում ստուգման ողջ փուլերի և հատկապես անդամների կողմից գնահատման/ընտրության փուլի վրա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ Հրապարակային դարձնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից դատավորների հավակնորդների վերաբերյալ տրված բարեվարքության եզրակացությունները, առնվազն՝ եզրակացության եզրափակիչ մասը:

▪ Որակավորման ստուգման հարցազրույցի փուլի ընթացքում սահմանել հոգեբանի ներգրավվածությունը: Հոգեբանների ներգրավվածությունը պայմանավորված է թեկնածուների էմոցիոնալ ինտելեկտը, բարոյական դատողությունը և արժեքային համակարգը գնահատելու անհրաժեշտությամբ, ինչը մասնագիտական մեթոդաբանություն և գիտելիքներ է պահանջում: Այդ գնահատումը պետք է իրականացվի բացառապես հոգեբան մասնագետների կողմից:

Դատավորների հավակնորդների ցուցակը համալրելու վերաբերյալ յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ կայացված որոշումները պատճառաբանել:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Թեկնածուներին տրվել են հոգեբանական և այլ բնույթի հարցեր, մասնավորապես՝

- ո՞րն է հավակնորդի՝ դատավոր դառնալու շարժառիթը,
- համընկնո՞ւմ են արդյոք արդարադատությունն ու օրինականությունը հավակնորդի համար,
- պրակտիկայում եղե՞լ է արդյոք, որ թեկնածուի խիղճը տանջել է, կամ պատահե՞լ է արդյոք, որ հավակնորդը քրտնաջան աշխատել է, բայց արդյունքի չի հասել և ի՞նչ է արել այդ ժամանակ,
- ի՞նչ արժեք ունի հանրային կարծիքը հավակնորդի համար, արդյո՞ք կոմպրոմիսի դժվար է գնում,
- դատական համակարգի ծանրաբեռնվածության մեջ ի՞նչն է գրավում հավակնորդին, որ ցանկանում է դառնալ դատավոր:

- արդյո՞ք հավակնորդը աշխատանքային գործունեության մեջ ունեցել է հետընթաց,
- հավակնորդը նախագծեր կազմելիս օգտվո՞ւմ է արդյոք գրականությունից,
- եթե դատավոր խնդրի ինչ որ հարցով կմերժի՞ արդյոք հավակնորդը դատավորին և արդյոք հավակնորդը կդիմի խորհրդին,
- դատավորի օգնական աշխատելիս արդյո՞ք հավակնորդը հայտնել է իր կարծիքը և արդյո՞ք հեշտ է գրել այն ակտերի նախագծերը, որոնցով կարծիքները չեն համընկել,
- դատախազական աշխատանք կատարելիս արդյո՞ք մեղադրական թեքումը չի ազդի հավակնորդի վրա՝ դատավոր աշխատելիս օբյեկտիվ որոշումներ կայացնելու հարցում,
- ի՞նչ դժգոհություններ ունի հավակնորդը դատական համակարգից, կա՞ն այնպիսի հանցակազմեր, որոնց ապաքրեականացումը կթեթևացնի դատական համակագը և որոնք այդքան էլ էական չեն,
- ի՞նչ կարծիքի է հավակնորդը նախկին քրեական օրենսգրքի և ներկայիս քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի վերաբերյալ՝ առանց վարարոդական իրավունքի, խմած վիճակում մեքենա վարելու հետ կապված,
- արդյո՞ք հավակնորդն իրավապահ քաղաքացի է իրեն համարում և եթե այո, ապա ինչո՞ւ է 19 ՃՈ խախտում թույլ տվել 1 տարվա ընթացքում։
- պե՞տք է արդյոք դատախազը ունենա մեղադրական թեքում,
- ո՞րն է հավակնորդի հոբբին,
- արդյո՞ք հավակնորդը համարում է իրեն բարի մարդ, ինչո՞վ է այն դրսևորվում և արդյո՞ք այդ բարությունը չի ազդի դատավոր աշխատելիս, օրինակ բոլորին բաց թողնի եթե դատավոր դառնա։
- Հավակնորդն ունի՞ արդյոք հերոս, ում ցանկանում է նմանվել,
- որոնո՞ք են հավակնորդի աշխատանքային և տան գրասեղանի գրքերը,
- եղե՞լ է, որ հավակնորդը մեղադրական եզրակացությունից հրաժարվել է, հավակնորդի մեղադրանքի հիման վրա արդարացումներ եղե՞լ են,

- ո՞վ է հավակնորդի համար հայ իրավունքում հեղինակություն,
- ո՞ր դատավորն է ավելի լավ աշխատում՝ ամուսնացած թե չամուսնացած,
- ո՞ւմ հետ հավակնորդը կգնար ճամփորդության,
- արդյո՞ք այլ մարզում դատավոր նշանակվելիս հավակնորդը խնդիր կտեսնի թե ոչ,
- ո՞րն է դատավորի աշխատանքի ամենահմայիչ կողմը հավակնորդի համար,
- արդյո՞ք հավակնորդը դպրոցական տարիներին դասերից փախել և եղե՞լ է որպես կազմակերպիչ,
- արդյո՞ք հավակնորդը ալկոհոլ օգտագործում է թե ոչ, կենաց ասո՞ւմ է և ո՞ր խմիչքն է սիրում և նմանատիպ այլ հարցեր։

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Վարքագծի կանոնի վերաբերյալ խնդիր

Դատավորի վարույթում գտնված ամուսնալուծության վերաբերյալ քաղաքացիական գործի քննության ընթացքում վերջինս, ձևավորելով ներքին համոզմունք, որ ամուսնալուծության կողմերը կարող են հաշտվել, և հաշվի առնելով, որ նրանք ունեն երեք մանկահասակ երեխա, միտումնավոր կերպով ձգձգել է գործի քննությունը և որոշման կայացումը։Արդյոք դատավորի կողմից թույլ է տրվել վարքագծի կանոնի խախտում։

Իրավական խնդիր

Արդյո՞ք հայցվորի կողմից հայցատեսակի սխալ ընտրությունը հայցի մերժման հիմք կարող է հանդիսանալ։